

«Հայիդրոէներգանախագիծ»  
փակ բաժնետիրական ընկերություն

---

Սյունիքի մարզի Խնձորեսկ բնակավայրում  
բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի  
կառուցում և շահագործում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն

«Քոնսեկարդ» ԱՊԸ տնօրեն՝



Վ. Թևոսյան

2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	4
2.	ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....	6
2.1.	<b>Բնապահպանական գնահատման մեթոդաբանություն ազգային օրենսդրական դաշտ</b> 9	
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	11
3.1.	<b>Տարածքի Ֆիզիկաաշխարհագրական պայմանները</b> .....	11
3.2.	<b>Ռելիեֆ, երկրաձևաբանություն</b> .....	14
3.3.	<b>Տարածքի սեյսմիկ բնութագիրը</b> .....	15
3.4	<b>Կլիմայի բնութագիրը</b> .....	16
3.5.	<b>Մթնոլորտային օդ</b> .....	20
3.6.	<b>Ջրային ռեսուրսներ</b> .....	20
3.7.	<b>Հողային ռեսուրսներ</b> .....	22
3.8.	<b>Բուսական և կենդանական աշխարհ</b> .....	23
3.8.1.	<i>Բուսական աշխարհ</i> .....	23
3.8.2.	<i>Կենդանական աշխարհ</i> .....	25
3.9.	<b>Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)</b> .....	25
3.9.1.	<b>Բնության և պատմամշակութային հուշարձաններ</b> .....	26
4.	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	27
4.1.	<b>Մարզի ընդհանուր բնութագիրը</b> .....	27
4.2.	<b>Ազդակիր համայնքների և նրանցում ընդգրկված բնակավայրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն</b> .....	28
5.	ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	29
5.1.	<b>Զրոյական տարբերակ</b> .....	29
5.2.	<b>Քննարկվող տարբերակներ</b> .....	29
6.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) .....	30
6.1.	<b>Գոյություն ունեցող իրավիճակը</b> .....	30
6.2.	<b>Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները</b> .....	31
6.3.	<b>Շինարարակար աշխատանքներ</b> .....	42
6.4.	<b>Նախապատրաստական աշխատանքներ</b> .....	44

6.5.	<b>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</b> .....	45
7.	<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b> .....	46
8.	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՄ</b> .....	48
8.1	<b>Ռիսկերի գնահատում</b> .....	48
8.2	<b>Մթնոլորտային օդի վրա ազդեցություններ</b> .....	49
8.3	<b>Հողային աշխատանքներ</b> .....	50
8.4	<b>Աղմուկի և թրթռումների ազդեցություն</b> .....	51
8.5	<b>Ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ</b> .....	52
8.6	<b>Ազդեցությունը հողածածկի վրա</b> .....	53
8.7.	<b>Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա</b> .....	54
8.8.	<b>Սոցիալական ազդեցությունը</b> .....	55
8.9.	<b>Աշխատանքի անվտանգություն և առողջություն</b> .....	56
8.10.	<b>Շահագործման փուլի ազդեցություններ</b> .....	57
8.10.1	<b>Օդի աղտոտում</b> .....	57
8.10.2	<b>Գեյոնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները</b> .....	58
8.10.3.	<b>Ջրային ռեսուրսներ</b> .....	59
8.11.	<b>Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն</b> .....	60
9.	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ</b> .....	61
10.	<b>ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ</b> .....	62
10.1.	<b>Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ</b> .....	63
10.2.	<b>Հրդեհային անվտանգություն</b> .....	63
10.3.	<b>Արտակարգ և վթարային իրավիճակներ</b> .....	64
11.	<b>ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ</b> .....	65
12.	<b>ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ</b> .....	66
	<b>Գրականության ցանկ</b> .....	68
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ</b> .....	69
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ</b> .....	73
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ցրման հաշվարկների արդյունքները</b> .....	76
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 4. Սեփականության վկայականների պատճենները</b> .....	85
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 5. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ եզրակացությունը</b> 93	
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 6. Նախագծման թույլտվություն</b> .....	94
	<b>ՀԱՎԵԼՎԱԾ 7 . Վեոլիա ջուր ՓԲԸ հետ պայմանագրի պատճենը</b> .....	96

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեության անվանումը	Բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի կառուցում
Նախատեսվող գործունեության նպատակը	Ժամանակակից հարմարություններով բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի կառուցում
Ձեռնարկող	«Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 33/1
Նախատեսվող գործունեության հասցեն	ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, գյուղ Խնձորեսկ, Քարդաշ թաղ., հողամաս 1
Ձեռնարկողի հեռախոս էլ.փոստ	Հեռ. + 374 33 109104, <a href="mailto:info@armhydroproject.am">info@armhydroproject.am</a>
Նախնական գնահատման հայտի /ՆԳՀ մշակող	«Քոնսեկտարդ» ՍՊԸ

«Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ն մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գորիս համայնքի, Խնձորեսկ գյուղի, Քարդաշ թաղամասի թիվ 1 հասցեում կառուցել բազմավառելիքային ավտոլիցքավորման կայան և բազմաֆունկցիոնալ հասարակական շենք և ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: Նախագծի մշակումը կատարվել է Գորիսի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն, նախատեսվող գործունեությունը ենթակա նախնական և հիմնական գնահատման: Հիմնական գնահատման և փորձաքննության արդյունքներով ՇՄԱԳ հաշվետվությանը շրջակա միջավայրի նախարարության կողմից պետք է տրամադրվի փորձաքննական եզրակացություն: Գնահատման նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Համաձայն "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /ՀՕ-110Ն/ նախագծով նախատեսված գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի: Ծրագրի նախնական փուլում կազմվել է նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտը, որի

փորձաքննության հիման վրա տրվել է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է հանդիսացել սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության մշակման համար:

ՇՄԱԳ-ի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, տեխնիկական առաջադրանքի պահանջներով, ինչպես նաև բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան Բազմալատելիքային ավտոլիցքավորման կայանի և բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա մշակվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն փաստաթուղթը: Այս փաստաթուղթը ներառում է ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են հնարավոր ռիսկերը և շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- ձեռնարկողի կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ աշխատանքային նախագիծ,
- ձեռնարկողին Գորիս համայնքի ղեկավարի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը,
- նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա, որը բաղկացած է ճարտարապետական և կոնստրուկտորական մասերից, նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների

ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

## 2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Բնապահպանական և քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.)** – 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014թ., վերջին փոփոխությունը 2023թ.)** - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)**: Սույն օրենքը կարգավորում է՝

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«ՀՀ ջրային օրենսգիրք»** - Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011 թ. N 75 - Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

**«ՀՀ բուսական աշխարհի մասին օրենք»**

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

**«ՀՀ կենդանական աշխարհի մասին օրենք»**

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000 թ.):

**«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք»**

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

**«Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը**

(2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)** - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,

- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,

- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշում,

- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

- 22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:



- 15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

- 11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2018թ.) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

## 2.1. **Բնապահպանական գնահատման մեթոդաբանություն ազգային օրենսդրական դաշտ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման և փորձաքննության, ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության, անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, շահագրգիռ հանրության ծանուցման, հանրային լուսմների գործընթացների, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու և այդ գործընթացներին մասնակցող անձանց վրա:

Բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի և բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է և փորձաքննությունն իրականացվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /ՀՕ 110-Ն/, շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ՊՈԱԿ կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի, ինչպես նաև ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը պարունակում են հանրային քննարկումներ կազմակերպելու ընդհանուր դրույթներ, իսկ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014թ նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշումը կարգավորում է հանրային լուսմների/քննարկումների կազմակերպման ընթացակարգը, ինչպես նաև սահմանում գործընթացի մեջ ներգրավված կազմակերպությունների/մասնակիցների դերերը և պատասխանատվությունները:

«Բ» կատեգորիայի գործունեության տեսակների փորձաքննությունը իրականացվում է չորս փուլով՝ պահանջվում է իրականացնել առնվազն 4 հանրային լուսմ, որոնք անց է կացնում նախաձեռնողը (նախաձեռնողը նախագծային խորհրդատուն է), փորձաքննություն անցկացնող լիազոր մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինները:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և նախագծման քննարկումներ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման՝ փորձաքննության փուլերում:

ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը սահմանվել և կազմվել է վերը նշված օրենքի պահանջներով հաշվի առնելով նախագծային փաստաթղթով նախատեսված ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները:

ՇՄԱԳ փուլում իրականացվել են հետևյալ գործընթացները.

1) գնահատվել է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.

2) Բացահայտվել և հիմնավորվել է նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթով նախատեսված լուծումների այլընտրանքային տարբերակները, ներառյալ

նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, և գնահատվում է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի, սոցիալ-տնտեսական վիճակի վրա.

3) մշակվել է բնապահպանական կառավարման պլան և շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով.

4) հաշվի է առնվում ազդեցության աստիճանը՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա տարածքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, ազդեցության հավանականությունը, աստիճանը, տևողությունը և կանխատեսվող ազդեցությունների հնարավոր գումարային ամբողջական աստիճանը.

5) հաշվի է առնվել նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:

Գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ ազդակիր համայնքի ղեկավարների, շահագրգիռ հանրության ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:

ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի ինչպես բնապահպանական այնպես էլ սոցիալական ելակետային տվյալները, գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքի և նյութերի վերաբերյալ տվյալները:

### **3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

#### **3.1. Տարածքի Ֆիզիկաաշխարհագրական պայմանները**

Բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի և բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի վարչական տարածքում՝ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման գոտում: Նախատեսվող գործունեության տարածքից մոտակա բնակելի տունը ուղիղ գծով գտնվում է մոտավորապես 2.2 կմ հեռավորության վրա: Սակայն հարկ է նշել, որ այդ տարածքում առկա են ջրբաժաններ և խորը ձորակներ, ինչը էականորեն նվազեցնում է ազդեցությունը:

Գյուղը գտնվում է Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց աջ, խոր ձորի զառիթափի լանջերին և սարահարթի վրա: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1580մ: Հեռավորությունը մարզկենտրոնից մոտավորապես 78 կմ է, Գորիս քաղաքից՝ 13 կմ:

Տարածքի կոորդինատները WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական համակարգով՝

N	X	Y
1	8619790.557	4377261.313
2	8619899.556	4377274.586
3	8619950.767	4377386.059
4	8619967.391	4377467.391
5	8619919.736	4377492.239
6	8619871.006	4377423.794

Տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատները.

- 39°31'17.36"N,
- 46°23'39.38"E

Պատկեր 1. Իրադրային սխեմա



### 3.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն


Տարածաշրջանին բնորոշ է վերին պլիոցեն-էոպլեյստոցեն. բազալտներ, անդեզիտներ, դացիտներ, ռեոլիտներ, օբսիդիաններ, պեոլիտներ, տուֆաբրեկչիաներ, տրավերտիններ:

Տարածաշրջանն ունի անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խորը մասնատված ռելիեֆ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է միջին բարձրության լեռնային գոտի:

Մակերևույթային գերակշռող թեքությունը կազմում է 5-10°:


Պատկեր 2. Մակերևույթի ձևագրությունը





հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ<sup>2</sup> է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝  $a=300$  սմ/վրկ<sup>2</sup>,  $A= 0.3g$ :

Պատկեր 4. Սեյսմիկ գոտիների քարտեզ



### 3.4 Կլիմայի բնութագիրը

Հայաստանի Հանրապետության տարածքում առկա է բնակլիմայական պայմանների մեծ բազմազանություն, որի ձևավորման գործում մեծ ազդեցություն ունի երկրի աշխարհագրական դիրքը, ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, տեղանքի բարդ և մասնատված ռելիեֆը և մի շարք այլ առանձնահատկություններ: Տարածքի կլիմայի վրա շոշափելի ազդեցություն է թողնում Հայաստանի Հանրապետության՝ մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնությունների վրա գտնվելը, որը բնութագրվում է չոր կոնտինենտալ կլիմայով ու կլիմայական հակադրություններով, ապտեղ գերակշռող դեր է ունենում Մեծ Կովկասի, Իրանական և Փոքրասիական բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը:


Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է չափավոր ցուրտ ձմեռներով և տաք ամառներով բնորոշվող գոտու մեջ: Հետազոտվող տեղամասը գտնվում է 116



կլիմայական գոտում: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +35 °C, նվազագույնը -20 °C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 744 մմ: Ձմռանը գերակշռում են հյուսիս-արևմտյան և հյուսիսային, իսկ ամռանը՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան քամիները:

Ատորև ներկայացվում է շրջանին բնորոշ կլիմայի տիպերը:

Պատկեր 5. Կլիմայական գոտիների քարտեզ



Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ օդերևութաբանական կայանը Գորիսի օդերևութաբանական կայանն է, համաձայն որի օդի միջին տարեկան ջերմաստիճանը 9.1°C է, հարաբերական խոնավությունը 70%, առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը՝ 47մմ, քամու միջին տարեկան արագությունը՝ 1.5մ/վ:

Աղյուսակ 1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Գորիս	1403	-0.5	0.0	2.9	8.5	12.6	16.2	18.9	18.6	14.7	9.9	5.5	1.7	9.1	-20	35

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Գորիս	1403	64	66	71	71	74	72	69	70	77	77	70	64	70	63	54

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Գորիս	34	44	71	91	113	91	48	39	62	64	53	34	744	47	65
	29	72	45	47	72	82	70	63	54	57	58	35	82		

Աղյուսակ 4. Քամու պարամետրերը

Միջին տարեկան պահող-տասին ճնշում (ԿՄՄ)	Միջին	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անողնոցների կնիքությունը%	Միջին ամսական սառածություն	Միջին սառեցման սառածություն	Միջին սառեցման սառածություն	Ուժեղ քամիներ (15մ/վ օրերի քանակ)	Հաշվարկային արագությունը մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" սառիների ընթացքում			
		Հյուսիս-արևելք (Վ)	Հյուսիս-արևելք (ՎԵ)	Կենտրոն (ԿԻ)	Հարավ-արևելք (ՎԵ)	Հարավ (Վ)	Հարավ-արևմուտք (ՎԻՄ)	Կենտրոն (ԿԻ)	Հյուսիս-արևմուտք (ՎԻՄ)						20	50	100	
		860.2	Հունվար	3	2	2	6	9	13						20	45	30	2.0
2.7	2.4			2.2	1.6	1.6	2.1	2.6	3.2									
Ապրիլ	2		2	4	13	12	14	18	35	33	1.5							
	2.3		2.2	1.8	1.6	1.7	2.0	2.3	2.5									
Հուլիս	1		1	4	17	15	14	17	31	26	1.2	1.5	25	34	38	40		
	1.4		1.4	1.6	1.7	1.6	1.6	1.6	1.6									
Հոկտեմբեր	2		1	2	12	14	14	17	38	35	1.3							
	1.9		1.9	1.8	1.7	1.6	1.9	1.9	2.2									

### 3.5. Մթնոլորտային օդ

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի որակի մշտադիտարկում գործունեության տարածաշրջանում չի իրականացվում:

Որոշակի պատկերացում մթնոլորտային օդի որակի վերաբերյալ կարելի է ստանալ «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի ներկայացված հաշվարկային մեթոդից<sup>1</sup>: Ըստ այդ ուղեցույցի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>,
- ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>,
- ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>,
- ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում փոշու անալիզատորով կատարված չափումների արդյունքում փոշու աղտոտվածության մակարդակը կազմել է 0.08 մգ/մ<sup>3</sup>:

### 3.6. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում մակերևութային ջրերի աղտոտվածությունը ևս վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Նախատեսվող գործունեության տարածքն ընդգրկում է Հարավային ջրավազանային կառավարման տարածքը:

Որոտանը գետը Սյունիքի մայր գետն է, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից՝ 3045 մ բարձրության վրա գտնվող Խալխա լճակից ու հարակից աղբյուրներից, իր մեջ է ընդունում ևս մի քանի մանր լճակներից հոսող առվակների, ինչպես նաև Գորայք գյուղի աղբյուրների ջուրը, ապա դեպի հարավ-արևելք ուղղությամբ հոսում Սիսիանի, Գորիսի տարածաշրջանների տարածքով, ներառում Հազարի Աղվանո վտակը և Միջնավան կայարանից միախառնվում Արաքսին: Երկարությունը 178 կմ է:


Համաձայն ՊՈԱԿ 2022 թվականի ամփոփագրի Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև և Սիսիան քաղաքից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Գորայք գյուղից վերև՝ պայմանավորված մանգանով, Սիսիան քաղաքից վերև՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով և վանադիումով, Սիսիան քաղաքից ներքև՝ «անբավարար» (4-րդ

<sup>1</sup> ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

դաս)՝ պայմանավորված մանգանով:

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և ներքև ընկած հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Գորիս քաղաքից վերև՝ պայմանավորված կախության չոր նյութերով, Գորիս քաղաքից ներքև՝ ամոնիում իոնով:

Պատկեր 6.




### 3.7. Հողային ռեսուրսներ

Հող, բնական գոյացություն է կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտ է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Դիտարկվող տարածաշրջանում տարածված են անտառային դարչնագույն կրաքարե լավահողեր:

Պատկեր 7. Հողային տիպեր



Անմիջապես գործունեության տարածքի հողածածկի աղտոտվածության մակարդակը պարզելու նպատակով կատարվել է նմուշառում, նմուշը տեղափոխվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա: Անալիզի արդյունքները ներկայացված են հավելվածների մասում:

### 3.8. **Բուսական և կենդանական աշխարհ**

#### 3.8.1. **Բուսական աշխարհ**

Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (տես՝ նկար 2): Դիտարկվող տարածաշրջանը գտնվում է Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը : Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմաններն են՝ 600- 3900մ ծ. մ.: Բուսական համակեցությունների հիմնական տիպերն են կիսաանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային: Բուսական աշխարհը ՀՀ մյուս ֆլորիստիկ շրջանների համեմատ ամենաբազմազանն է՝ 2000 բուսատեսակ:

Տարածքներում Ֆլորան հիմնականում տարախոտային է, խիտ անտառները բացակայում են: Ծառատեսակներն արտահայտված են հիմնականում քսերոֆիլ նոսր անտառային բուսականության տիպով՝ սաղարթավոր խառը տեսակների մասնակցությամբ և սալորենու, տանձենու տեսակներով: Տեղ-տեղ արտահայտված են թփուտային, ժայռային բուսականությունը: Թփերը հիմնականում նոսր ձևով հանդիպում են բոլոր տարածքներում, գերադասելով խոնավ ապրելավայրերը:

Տարածքի լեռնատափաստանային բուսականությունն աչքի է ընկնում տարախոտահացազգային մասնակցությամբ: Այս լանդշաֆտային գոտում ամենաշատ տեսակներով աչքի են ընկնում բարդաձաղկավորները, հացազգիները, լոբազգիները և վարդազգիները, խաչաձաղկավորները: Վայրի դեղատու և ուտելի բույսերի ցանկում ընդգրկված են է շուրջ 100 բուսատեսակներ:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ կառուցապատված են՝ զուրկ բնական բուսական ծածկույթից և հողային ծածկույթից: Նախատեսված աշխատանքների տարածքում, ուր բացակայում է բնական լանդշաֆտը:

Ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, ըստ առկա գրականության տվյալների, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չեն հայտնաբերվել: Դաշտային հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տարածքը և շրջակա տարածքները նաախկինում օգտագործվել են գյուղատնտեսական նպատակներով:

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ բույսերի հազվագյուտ տեսակներ, քանի որ տարածքը մշտապես գտնվել է մարդկային գործոնի ազդեցության տակ, որի հետ կապված բուսատեսակների համար պահպանության հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Նկար 8. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները



Նկար 9. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները





### 3.8.2. **Կենդանական աշխարհ**

Լեռնատափաստանային գոտու անողնաշարավոր կենդանիների ֆաունան համեմատաբար աղքատ է: Այս գոտին առավել բարենպաստ է թփուտային դաշտամկան (Msubterraneus), կզաքիսի (Martes foina) աղվեսի (Vulpes vulpes), գայլի (Canis lupus) և այլ տեսակների համար:

Կաթնասունների գիշատիչ տեսակներից միայն գորշ արջն է գրանցված ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում: Չղջիկները ներկայացված են ՀՀ-ում լայն տարածված տեսակներով:

Թռչունները բազմազան են, որը պայմանավորված է հետազոտվող տարածաշրջանի ռելիեֆի բազմազանությամբ՝ դաշտավայր, քարքարոտ բլրալանջեր, որոնք հարմար բնադրավայր են արտոյտների, քարաթռչնակների և այլ մանր տափաստանային թռչունների համար: Շատ են նաև գիշատիչ թռչունները, որոնց կերի բազան մանր կրծողներն են:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

### 3.9. **Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)**

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ:

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ՝ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059 որոշման Սյունիքի մարզում է գտնվում «Գորիսի» պետական արգելավայրը, որն ամենամոտն է կառուցապատվող տարածքին: Արգելավայրը գտնվում է մոտավորապես 3 կմ հեռավորության վրա, հետևաբար նախատեսվող աշխատանքները ոչ մի բացասական ազդեցություն չեն կարող թողնել վերջինիս վրա:

### 3.9.1. Բնության և պատմամշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2008թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967 -Ն որոշման տարածաշրջանում առկա ստորև բերված բնության հուշարձանները չեն առնչվում կառուցապատվող տարածքի հետ:

#### Գորիսի տարածաշրջանի բնության հուշարձանների ցանկ

<i>N</i>	<i>Անվանումը</i>	<i>Տեղադիրքը</i>
53.	«Սատանա» բնական քանդակ	Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
54.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Գորիս քաղաքի շրջակայքում
59.	«Խորձոր» V-աձև կիրճ	Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
60.	«Անանուն» էրոզիոն ռելիեֆ	Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
61.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
65.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Որոտան գյուղի հվ-արմ եզրին
66.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Որոտան գյուղի հվ-արմ եզրին
67.	«Շիշքար» (Բաղաքար) դայկա	Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
68.	«Անանուն» բուրգանման մնացուկներ	Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
69.	«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
70.	«Բնական թունել»	Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
34.	«Մեծ Նովի» աղբյուր	Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, ճամփ-եզրին, խաչքարի մոտ
35.	«Որոտան» աղբյուր	Որոտան գյուղի հս ծայրամասում
23.	«Շինուհայր» ջրվեժ	Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
9.	«Որոտան» բնապատմական համալիր	Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
10.	Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին

Խնձորեսկն ունի հարյուրավոր բնակելի քարանձավներ, խաչքարեր, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի դամբարանատեղի: Համաձայն ՀՀ կառավարության կողմից 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2322-Ն որոշման գյուղը հարուստ է պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններով:<sup>2</sup>

Առավել նշանավոր շինություններից են.

- Աղջկա բերդ ամրոցը
- Խնձորեսկի բերդը, որը կոչվում է նաև Մխիթար Սպարապետի ամրոց
- Սուրբ Թադևոս եկեղեցին
- Անապատ եկեղեցին
- Սուրբ Հռիփսիմե եկեղեցին:

Գյուղում է գտնվում Մխիթար սպարապետի գերեզմանը: Գյուղում 2012թ. բացվել է մոտ 160 մ երկարությամբ ճոճվող կամուրջ<sup>3</sup>:

Անհատեշտ է նաև նշել, որ նախատեսվող գործունեության տարածքից 2.5 կմ շառավղող հեռավորության վրա պատմության և մշակույթի որևէ հուշարձան չկա:

#### 4. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

##### 4.1. Մարզի ընդհանուր բնութագիրը

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Այն հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից պետական սահմանով Իրանին, արևմուտքից և արևելքից Ադրբեջանին:

Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

<sup>2</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=22116>

<sup>3</sup> <https://www.goriscity.am/>

- արդյունաբերություն 18.8 %,
- գյուղատնտեսություն 6.4 %,
- շինարարություն 8.9 %,
- մանրածախ առևտուր 2.1 %,
- ծառայություններ 1.6 %:

Աղյուսակ 5. Ընդհանուր տեղեկատվություն Սյունիքի մարզի վերաբերյալ<sup>4</sup>

Տարածքը	4506 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.2
Համայնքներ, 2023 թ. տարեսկզբի դրությամբ	7
Քաղաքներ	7
Գյուղեր	132
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ	134.6 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	90.2 հազ. մարդ
գյուղական	44.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,%	4.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ.,%	67.0
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306.003.6 հա
այդ թվում՝ վարելահողեր	43 806.4 հա

#### 4.2. Ազդակիր համայնքների և նրանցում ընդգրկված բնակավայրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Գորիս քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 19.5 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ: Տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

##### Խնձորեսկ

Բնակչությանը՝ 2 018 մարդ  
 Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 78 կմ  
 Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 13 կմ  
 Կարգավիճակը՝ սահմանամերձ:

<sup>4</sup> <https://www.armstat.am/>

Խնձորեսկ գյուղական բնակավայրի բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1580 մ, զբաղեցրած տարածքը կազմում է 6772, 8 հա: Գյուղը գտնվում է Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց աջ, խոր ձորի զառիթափի լանջերին և սարահարթի վրա, որտեղից էլ ստացել է Խնձորեսկ անվանումը:

Գյուղում բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղում կա բավական մեծ գյուղացիական տնտեսություն:

## 5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ` ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

### 5.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և նախատեսվող բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանը չի կառուցվում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված լրացուցիչ ռիսկեր կամ արտակարգ իրավիճակների հնարավոր վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաձին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Տարածաշրջանի տրանսպորտային միջոցների համալիր վառելիքային սպասարկման որակի բարելավում:
- Նախագծի իրականացման ընթացքում Խնձորեսկ բնակավայրում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորություններ չեն լինի:

### 5.2. Քննարկվող տարբերակներ

Քանի որ որպես ձեռնարկող՝ «Հայիդրոէներգանախագիծ» ընկերության նպատակը եղել է վառելիքի լցակայանի կառուցումը և շահագործումը, որպես տարբերակներ դիտարկվել են այդ գործունեությունը կազմակերպելու ստորև ներկայացված 2 տարբերակները.

*Ա. Կառուցվում և շահագործվում է միայն հեղուկ գազի լցակայան: Այս տարբերակի առավելություններն են.*

- շինարարական աշխատանքների ծավալները և համապատասխանաբար կապիտալ ներդրումների ծավալները կլինեն ավելի փոքր,
- սպասարկող անձնակազմը կլինի ավելի փոքրաքանակ և ընթացիկ ծասխերը

նույնպես կլինեն ավելի քիչ:

Տարբերակի բացասական կողմերն են.

- ավելի ցածր շահութաբերություն
- վառելիքի մատակարարման սահմանափակ ծավալներ:

*Բ. Կառուցվում և շահագործվում է հեղուկ վառելիքի համալիր՝ հեղուկ գազի, դիզելային վառելիքի և բենզինի լցակայան:*

Այս տարբերակի առավելություններն են.

- ավելի բարձր շահութաբերություն
- տեսակարար ծախսերի ավելի ցածր մակարդակ:

Տարբերակի բացասական կողմերն են.

- կապիտալ ծախսերի ավելի բարձր մակարդակ
- շինարարական աշխատանքների ավելի երկար տևողություն:

Վերլուծելով ներկայացված տարբերակները ընտրվել է երկրորդ տարբերակը հետևյալ հիմնավորումներով.

- բնապահպանական ազդեցությունը գործնականում նույնն է, քանի որ շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքների ծավալները նույնն են, իսկ արտանետումների տարբերությունը կկազմի մոտավորապես 12 – 13 տոկոս, քանի որ հիմնական վաճառվող վառելիքը հեղուկ գազն է, որի ծավալները 7 - 8 անգամ ավելի շատ են, քան բենզինի և դիզելավառելիքի, համապատասխանաբար արտանետումները նույնքան ավելի շատ կլինեն:

- շահութաբերությունը ավելի բարձր է:

## **6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)**

### **6.1. Գոյություն ունեցող իրավիճակը**

«Հայիդրոէներգանախագիծ» ՓԲ ընկերությունը նախատեսում է կառուցել բազմավառելիքային ավտոլիցքավորման կայան, որի մակերսը կազմում է 2.1234 հա (տես՝ Ճարտարապետահատակագծային առաջադրանքը), և հասարարական շինության: Քանի որ այդ շինության կառուցապատման մակերեսը չի գերազանցում 1500 մ<sup>2</sup> (կառուցապատման մակերեսը կազմում է 1202 մ<sup>3</sup>), այն ենթակա չէ փորձաքննության: Առանձին նախագծով այն ներկայացվել է համայնքին և ստացվել է համապատասխան շինթույլտվություն (կցվում է):

Ավտոլցավորման կայանը կառուցապատվելու է բնակավայրից դուրս, Գորիսի համայնքով անցնող՝ Մ-4 մայրուղային ճանապարհին կից: Հողամասերի սեփականատեր է հանդիսանում սույն գործունեության ձեռնարկող՝ «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ /կադաստրային ծածկագեր՝ 09-045-0124-0029, 09-045-0124-0025, 09-045-0124-0031, 09-045-0124-0028, հողերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման/:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Խնձորեսկ բնակավայրի մոտակա տներից մոտ 2.5 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության իրականացման համար կատարվել է ինժեներաերկրաբանական հետազոտություններ: Կատարվել են հետևյալ աշխատանքները.

Հորատվել է 6 հորատանցք 1-ը՝ 15 մ, 5-ը՝ 10 մ, ընդամենը փորվել է 65 մ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի տեղամասը գտնվում է Գորիս-Խնձորեսկ մայրուղու աջ կողմում:

Կատարված դաշտային աշխատանքների արդյունքների հիման վրա առանձնացվել են գրունտների 2 շերտ՝ վերևից ներքև:

Շերտ-1 հողաբուսական ծածկույթ, որը առկա է միայն հորատանցք N1-ում:

Շերտ-2 Ավազ:

Հողաբուսական շերտը (1) ինժեներաերկրաբանական տեսակետից հետաքրքրություն չի ներկայացնում:

Շերտ-2 -ը ներկայացված է ավազներով, որոնք տարածված են ողջ տարածքում:

Ստորև ներկայացված է ավազային գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները.

- գրունտի խտությունը՝ 1750 կգ/ մ<sup>3</sup>
- մասնիկների խտությունը՝ 2660 կգ/ մ<sup>3</sup>
- ներքին շփման գործակիցը՝ 0.466
- տեսակարար կապակցվածությունը՝ 0.003 ՄՊա
- դեֆորմացիայի գործակիցը՝ 30 ՄՊա
- պայմանական հաշվարկային ճնշումը՝ 0.2 ՄՊա
- ներքնակի գործակիցը՝ 5կգ/սմ<sup>3</sup>:

Հետազոտվող տարածքում գրունտային ջրերը բացակայում են:

## 6.2. Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Համաձայն աշխատանքային նախագծի, որը բաղկացած է ճարտարապետական և կոնստրուկտորական մասերից, նախագծվող բազմավառելիքային ավտոլիցքավորման

կայանը կազմված է լինելու հետևյալ շինություններից՝

- ավտոգազալցավորման ճնշակային կայան
- բնական գազի առաջնային կուտակիչներ,
- սեղմված գազի լցավորման սյունակներ՝ 4 հատ,
- սեղմված գազի ստորգետնյա պահեստային կուտակիչներ,
- բենզալցակայան՝ 3 հատ լցասյունակային տարողություններով,
- պրեմիում և ռեգուլյար մակնիշի բենզինի տարողություններ՝ 2 հատ /10 խմ

ծավալով/

- վառելիքի վթարային տարողություն /10 խմ ծավալով/
- դիզելային վառելիքի տարողություններ 4 հատ՝ 50 խմ, 2 հատ՝ 25 խմ և 1 հատ՝ 10

խմ տարողություններով,

- պրեմիում և ռեգուլյար մակնիշի բենզինի լցասյունակներ,
- դիզելային վառելիքի լցասյունակ,
- յուղի լցասյունակ,
- գազաբալոնների տեղադրման և փորձարկման տեղամասերից
- բենզինի և դիզվառելիքի ստորգետնյա տարողություններից,
- վառելիքի ավտոցիստեռնի կանգառի հարթակ,
- գազաբալոնների փորձարկման և տեղադրման տեղամասեր,
- առևտրի կենտրոնից:

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանը ներառում է նաև հետևյալ օժանդակ շինությունները և կառույցները՝ սպասասրահ, օպերատորական սենյակներ՝ ԱԳԼՃԿ-ի և բենզալցակայանի համար, անձնակազմի, տնօրենի համար հանգստի սենյակ, սրճարան, էլ ենթակայան /փակ/, նավթորսիչ /տարողություն/, սանհանգույց, հակահրդեհային գույք, հիդրանտ, վառելիքի դատարկման հոր և այլն:

Հասարակական սպասարկման նշանակության մասնաշենքն իր մեջ ներառում է սպասասրահ, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ, հասարակական սպասարկման՝ սրճարան, առևտրի սրահ և այլն, օպերատորական սենյակ:

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանը /այսուհետ ավտոլցավորման կայան/ նախատեսված է համապատասխանաբար սեղմված բնական գազ /մեթան/, բենզին և դիզելային վառելիք ընդունելու, պահեստավորելու և ավտոտրանսպորտային միջոցները լցավորելու համար: Վառելիքի ընդունման, պահեստավորման տարողությունները նախատեսվում է տեղադրել ստորգետնյա:

Բոլոր տարողությունները և սարքվածքները միացնել հողանցման կոնտուրին: Կայանում տեղակայված շինությունները և կառույցները նախատեսված են մեկ հարկանի՝ I,



II, III աստիճանի հրակայունության:

Կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է կանաչապատել: Կառուցապատման գործակիցը կազմում է 0.7, կանաչապատման տոկոսը՝ 30 կամ հողամասի 0.837 հա-ը /ինչը նախագծման թույլտվության պահանջ է: Երևացող տեղերում նախատեսված են տեղագրել տեղեկատվական ցուցանակներ վառելիքի վերաբերյալ:

Տարածքում պետք է տեղադրվեն տրանսպորտային միջոցների շարժման ուղղությունների և շարժման արագությունը սահմանափակող ցուցանակներ:

Կայանի ավտոմեքենաների մուտքի ու ելքի ճանապարհները, ինչպես նաև օպերատորական և այլ շինությունների շրջապատը նախատեսված են ասֆալտապատել, լցավորման տեղամասում հատակը պատել կայծ չարձակող մայթային սալիկներով: Կայանի տարածքը պետք է լինի հարթ և ունենա հոսքային ջրերի կենտրոնացված հավաքում, հետագայում դրանք մաքրման կամ ջրահեռացման համակարգ մղելու համար:

### ***Ճնշակայանի շինություն***

Հիմքերը նախատեսված են միաձույլ ե/բ ժապավենային  $h=400$ մմ բարձրության և 500մմ լայնության B 25 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով:

Նախատեսվող ե/բետոնե միաձույլ սյուները քառակուսի են 400x400մմ չափերի հատույթով, B25 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Հեծանները ուղղանկյուն հատվածքի են են 400x400մմ չափերի հատույթով, B25 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Նախատեսվող ծածկն իրականացվում է օդափոխվող թեթև մետաղական հավաքովի կոնստրուկցիաներով: Արտաքին պատերն իրականացվում են 400մմ ընդհանուր հաստությամբ կանոնավոր ձևի տուֆ քարով: Տանիքը միալանջ է հավաքված մետաղական կարկասի վրա, ջրահեռացումը կազմակերպված: Ներքին բաժանարար պատերը նախատեսվում են 190\*90\*400 չափի ամերիկյան տիպի պեմզաբլոկներով:

### ***Սեղմված գազի լցասյունակներ***

Նախատեսված են միաձույլ ե/բ ժապավենային  $h=500$ մմ բարձրության և 500մմ լայնության հիմնահեծաններից և 200մմ հաստության համատարած հիմնասալից B25 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Կրող կոնստրուկցիաները իրականացվում են թեթև, մետաղական տարածական կարկասներից: Արտաքին երեսպատումը նախատեսվում է alucobond տիպի կոմպոզիտային նյութերով:

### ***Սեղմված գազի պահեստային կուրակիչներ***

Երկաթբետոնյա կոնստրուկցիաներն իրենից ներկայացնում են որպես միաձույլ կերպով իրականացված հիմնասալ և հիմնապատեր:

Տանիքը միալանջ է հավաքված մետաղական կարկասի վրա, օդափոխվող, ջրահեռացումը կազմակերպված: Արտաքին պատերի երեսպատումը նախատեսվում է alucobond տիպի կոմպոզիտային նյութերով:

### ***Էլեկտրական փակ ենթակայան***

Շինության կոնստրուկտիվ համակարգը ընդունված է, որպես շրջանակա-կապային տարածական կարկաս:

Հիմքերը նախատեսված են միաձույլ ե/բ ժապավենային  $h=400$ մմ բարձրության և  $500$ մմ լայնության B25 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Նախատեսվող ե/բետոնե միաձույլ սյուները քառակուսի են  $400 \times 400$ մմ չափերի հատույթով, 825 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Հեծանները ուղղանկյուն հատվածքի են  $400 \times 400$ մմ չափերի հատույթով, B 25 դասի ծանր բետոնից, բազալտե խճ և կվարցային ավազի լցանյութով: Նախատեսվող ծածկն իրականացվում է  $1490 \times 5970$ մմ չափերի հավաքովի կողավոր ծածկի սալերով: Արտաքին պատերն իրականացվում են  $400$ մմ ընդհանուր հաստությամբ կանոնավոր ձևի տուֆ քարով: Տանիքը միալանջ է հավաքված մետաղական կարկասի վրա, ջրահեռացումը կազմակերպված:

### ***Բենզինի և դիզ վառելիքի փարողությունների հոր***

Ստորգետնյա տարողությունները տեղագրել փոսի մեջ, որի ներքևի նիշը հողի մակերևույթից պետք է լին 4,9մ: Տարողությունները փոսի մեջ տեղագրել բետոնե հիմքի վրա: Տարողությունները փոսում, հիմքի վրա տեղադրելուց հետո, փոսի հողի հետլիցքը կատարել:

- մինչև հիմքի վերևը տեղային հողով և ավազախճային խառնուրդով,
- մինչև  $0,000$  նիշը շինարարական ավազով:

Հիմքը կառուցել մոնոլիտ ամրապնդած  $F15$  դասի բետոնից, տեղադրելով անկերային բոլտեր տարողությունները ամրացնելու համար: Ամրանավորումը կատարել առանձին միջուկներով: Հիմնահատակը խտացնել  $40$  մմ հաստության խճի շերտով:

Հիմքը կառուցելուց անմիջապես հետո տեղային հողով կատարել հետլիցք՝ խճային շերտից, մինչև հիմքի վերևը՝  $20$  սմ-ից ոչ ավել: Տարողությունների տեղագրումից հետո հետլիցքը կատարել շինարարական ավազով, համապատասխանաբար  $20$  սմ շերտային խտացումով,  $0,7$  աստիճանի խոնավության դեպքում:

### ***Բազմաֆունկցիոնալ շենք***

Նախատեսվում է կառուցել երկհարկանի շինություն, որի առաջին հարկում կգործի առևտրի կենտրոն և սննդի օբյեկտ: Երկրորդ՝ մանսարդային հարկում հետագայում կարող


են ձեռնարկվել գրասենյակային /ծրագրավորման/, կամ այլ, փորձաքննություն չպահանջող, գործունեություն:

Տարածքում նախատեսված են սանհանգույցներ (3 զուգարան) համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 01.10.2010 թվականի N 21-Ն հրամանի:

# ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500




1	Ճեշակայան
2	Բնական գազի առաջնային կուտակիչներ
3	Սեղմված գազի լցավորման պոմանկներ
4	Շվարարան
5	Սեղմված գազի ստորգետնյա պահեստային կուտակիչներ
6	Պրենմիյում և ռեզուլյար մակերջրի բեկցիկի սարքադրություններ V=10P (2 հատ)
7	Վանելիքի վթարային V=10P սարքադրություն
8	Չիզելային վանելիքի սարքադրություններ V=50P(4 հատ), V=25P (2 հատ), V=10P (2 հատ)
9	Պրենմիյում և ռեզուլյար մակերջրի բեկցիկի լցարտանակ
10	Չիզելային վանելիքի լցարտանակ
11	Չիզելային վանելիքի լցարտանակ
12	Յուտի լցարտանակ
13	Շվարարան
14	Վանելիքի ավտոզիտուեկի կանգառի ծախքակ
15	Օպերատորական / ԱԳԼՃԿ/
16	Սպասարան
17	Սենսակազմի ծանցուռի սեկցակ
18	Տնօրենի աշխատասեկցակ
19	Օպերատորական / բեկցակցակցայակի
20	Սրճարան
21	Էլ. էներգայակ / փակ /
22	Նախնարայի / սարքադրություն /
23	Հակահրդեհային գույք
24	Էլ. վահանակային
25	Հիդրանտ
26	Վանելիքի դատարկման հոր (հանգույց)
27	Բաժանարար հոր
28	Օդակիրության խոռոչ
29	Սանհանգույց
30	Գազարտունների տեղադրման տեղամաս
31	Գազարտունների փորձարկման տեղամաս



Տնօրեն	Ն. Բունիաթյան	<i>[Signature]</i>	«Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Գյուղ խնձորենակ, Քարդաշ թաղամաս Թիվ 100, Խողատարածքում «ՀԱՅԿՌՈՒՆԵՐԳԱՍԱՆԱԳՐԾ» ՓԲԸ-ին պատկանող Բազմակենսային ակտիցավորման կայանի կառուցման նախագիծ	Փուլ	Թերթ	Թերթեր
Նախագծեց	Ա. Բարսեղյան	<i>[Signature]</i>		ՄՍ	Ը-3	46
			ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՄՄՍ			
			Գլխավոր հատակագիծ Մ 1:500 Շինությունների դասավորություն	«ԱՇՁԱԿ» ՓԲԸ Պետ. լից. No 16912		

# Ճնշակայանի հատակագիծ Մ 1:100




Տնօրեն	Լ.Ռուփաջան		«ԱրմՀԱՅԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի հասցեական կետի կառուցվածքային կազմակերպչական ծախսերի կատարումը		
Լսմամբ	Ա.Բաղդասարյան		Փուլ	Տեղ	Ճեզ
			ՍԵ	Տ-4	48
			Ճնշակայանի հատակագիծ		
			«ԱՐՇԱԿ» ՓԲԸ ՊՈՒ ԱՅԿ ԿՈՆՍՏ		

Սեղմված գազի բենզալցակայանի օպերատորական, տնօրենի սենյակ, հանգստի սենյակ, սրճարան, սպասարան, սան հանգույց հատակագիծ Մ1:100




Տնօրեն	Լ. Բովսեպյան	<i>[Signature]</i>	Ա. Արմենյանի մարզի Նախարարության Քաղաքաշինության ՆՈՒ նախարարության «ԱՆՏԻՎԵՆԻԼԵՂՎԱԼԱՅՆՄԻՈՒՄ» ՓԲԸ-ի պատվանոց ակտիվացված էլարակ կառուցման համարով	Փուլ	Ձեռք	Ձեռքեր
Նախագծող	Ս. Քարսեղյան	<i>[Signature]</i>		ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐՎԱԼ ԱՍՍ	ԱՆ	Ե-14
			Ստորագրող ճարտարագետի անձնագրի անունը, տեղի և ամսի համարը, տնային տնտեսության անվանումը	«ԱՇՉԱԿ» ՓԲԸ Պետ. լից. No 16912		

ԱՊՐԱՆԱԾ ԳԱԾԻ ԼՏՍՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԴՍԱԿԱԿՈՑ ԻՒ 100



Տնօրեն	Լ.Բովսեպյան		ՀՀ Մարտի 20-ի Քննչական կոմիտեի Քննչական բաժանում, №1 հարցաթուղթով «ԱՄՆԱԲՆՈՒՆԵՐԳԱՆԱԾՈՒՄ» ՓԲԸ-ի տրամադրած անվտանգության կարգի կատարման նպատակով		
Նախագծիչ	Ա.Ք. Գրիգորյան		ՎՈՒՄ	ԲՆԵՐ	ՆՆԵՐՆԵՐ
			ՎՈՒՄ	Յ-27	41
			«ՍՇՆԱԿ» ՓԲԸ Պետ. լից. № 16912		


ԲԵՆՁԻՆԻ և ՊԻՑ՝ ՍԱՌԵՆՆԻՔԻ ԼՅԱՍՅՈՒՆԱԿՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:100



Տնօրին	Ե. Բուկիսյան		«Վ. Սոմիգի ձառնարկի նախագիծը և կառուցման ժամկետը» հաստատվել է «ՀԱՅԿՈՒՄՆԵՐՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԻՆԻ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված կարգի կառուցման համաձայն		
Նախագծող	Ա. Բաղդասյան		<b>ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՍՍՍ</b> «ՄՇՄ» ՓԲԸ Բենզինի և ՊԻՑ վաճակի լցարկումներ հատակագիծ Մ1:100		
			1/2	Ճ-35	46
			«ՄՇՄ» ՓԲԸ Դեռ. լից. № 16912		



Բենզինի և դիզ վառելիքի ստորգետնյա տարողությունների հոր  
 հատակագիծ Մ 1:100



ՏԵՃՈՐՆ	Լ. Բաղդասարյան	Վ. Կոստանյան	ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍ Բենզինի և դիզ վառելիքի տարողությունների կառուցվածքներ		
ՆԱԽԱԳԾԵՐ	Վ. Բաղդասարյան	Վ. Կոստանյան	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
			ԱՆ	Կ-40	49
			«ՆՇՇԱ» ՓԲԸ Գե. Կ. № 16912		

### 6.3. Շինարարական աշխատանքներ

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 18 ամսվա ընթացքում՝ համաձայն օրացույցային գրաֆիկի:

Շինարարական աշխատանքների պայմանները

Սեյսմիկ ազդեցությունը՝ - 1-ն գոտի,

- Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ - 35կգ/մ<sup>2</sup>,
- Ձյան նորմատիվային քաշը՝ - 60կգ/մ<sup>2</sup>,
- Ձմռան միջին ջերմաստիճանը՝ - 15°C-18°C:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 2.1234 հա /բազմավառելիքային ավտոլիցքավորման կայանի և բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի կառուցման համար/: Հողամասում կառուցապատման և կանաչապատման ցուցանիշներն են.

- Կառուցապատման մակերես /անջրանցիկ/ - 14863.8 քմ, կամ հողամասի 70 %-ը:
- Կանաչապատման մակերես –6370.2 քմ, կամ հողամասի 30 %-ը:

Բոլոր կառուցվող մասնաշենքերը իրականացվում են ե/բ կրող կոնստրուկցիաներով, քարե պարփակող պատերով: Մեքենայական մասնաշենքի և տարածքի վրա լցասյուների ծածկերը նախատեսված է իրականացնել մետաղական թեթև կոնստրուկցիաներով:

Բնական գազի լցասյուների ծածկոցը ներկայացնում է հատակի նիշից 5.0մ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներից ծածկ, որի՝ հատակագծային լուծումը իրականացված է 4.00 առանցքային հեռավորությամբ 5.65 մ երկարությամբ 2.0 մ բարձրությամբ, միմյանց նկատմամբ զուգահեռ, միաձույլ ե/բ 9 հատ բաժանարար պատերից:

Ճնշակայանը ե/բ կրող կոնստրուկցիաներով 13.0 x 9 մ արտաքին չափերով կարկասային շինություն է: Բոլոր շինությունների պարփակող պատերը իրականացվում են ուղիղ կտրվածքի տուֆ քարերով , իսկ ճնշակայանի պարփակող պատերը 200մմ հաստությամբ:

Տանիքը՝ միաթեք, ծպեղնակավարամաձային կոնստրուկցիաներով է ծածկված տանիքի կղմինդրատիպ փոշեներկված թիթեղով: Ջրահեռացումը արտաքին է՝ կազմակերպված: Արտաքին հարդարումը իրականացվում է ց/ա սվաղով և ներկվում ջրադիմացկուն ներկով: Պարապետները իրականանում է ալիկաբոնդով: Միջնապատերը իրականացվում են պեմզաբլոկներից: Պեմզաբլոկները 200 մմ և 100մմ հաստությամբ, ամրակապվում են մետաղյա ճկուն կապերով՝ պատերի և ծածկերի սալերի հետ: Ներքին հարդարման աշխատանքները իրականացվում են ց/ա սվաղով, մածիկապատվում և ներկվում են լատեքսային ներկերով:

## **Ջրամատակարարում և կոյուղի**

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանի սանիտարական հանգույցների և հակահրդեհային ջրի միացումը իրականացվելու է Վեոլիա ջուր ընկերության գործող՝ Փ-100մմ ջրատարին: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քնակության համար անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ՝ 50մ<sup>3</sup> տարողությամբ ե/բետոնյա ջրավազան, համապատասխան պոմպակայանով: Պոմպակայանից ջրավազանից ջուրը մղվում է հակահրդեհային դիտահոր, որտեղ նախատեսված է 2 հատ հակահրդեհային Փ-50մմ միացման գլխիկներ: Տարածքում նախատեսված է տեղադրել առաջնային հակահրդեհային միջոցներ: Պոմպակայանից ջրագիծը միացվում է նաև 50մ<sup>3</sup> տարողության հովացման բաքին: Տաք ջրի պատրաստումը կատարվում է էլեկտրատաքացուցիչի միջոցով, որը տեղադրված է խոհանոցի պատի վրա:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով կոյուղու բակային ցանց, որտեղից լցվում է գործող արտակնոցային փոս /անթափանց պատերով և հատակով/:

Արտակնոցային փոսից ժամանակ առ ժամանակ ավտո-ցիստերնով հավաքված կեղտաջրերը տեղափոխվում են նախատեսված վայր:

Ցանցերի համար կիրառված են պլաստիկ խողովակներ պատերի և առաստաղների վրա՝ Փ-50-100մմ: Ցանցերի վրա նախատեսված են ստուգիչներ՝ ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար: Ներքին գործող ցանցերը կառուցվելու են կոյուղագծերի պլաստիկ խողովակներով:

## **Էլեկտրամատակարարում և ջերմամատակարարում**

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀԷՑ ցանցից՝ համաձայն տեխնիկական պայմանի, պայմանագրային հիմունքներով: Նախատեսվող կայանի տաք ջրամատակարարումը և ջեռուցումը կիրականավի էլեկտրական սարքերի միջոցով:

Հակահրդեհային պաշտպանությունը իրականացվել է հակահրդեհային հիդրանտների միջոցով: Տարածքում իրականացվելու է շանթապաշտպանություն:

## **Գազամատակարարում**

Բազմավառելիքային ավտոլցավորման կայանի գազամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանի իրականացվելու է վերգետնյա գործող գազատարից:

## **Հողային աշխատանքներ. կադրային ապահովում և շինարարական**

Հողային աշխատանքների տևողությունը կազմում է 50 օր: Տարածքում արդեն իսկ իրականացվել են որոշ ծավալի հողային և հարթեցման աշխատանքները: Հողային աշխատանքների ժամանակ 2160 խմ գրունտի մշակման դեպքում առաջացող բուսահողի ծավալը կազմում է 240 մ<sup>3</sup> բուսահող, որը առանձնացվում է և պահպանվում հետագա բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար:

Շինարարության ժամանակ նախատեսվում է ներգրավել 17 աշխատակից, հնժեներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ, մեքենավարներ և օգնականներ՝ 5 մարդ:

Շինարարության ընթացքում ավատեսվում է օգտագործել հետևյալ շինարարական տեխնիկական միջոցները՝ էքսկավատոր /հիդրոնուրճով/՝ 1 հատ, բեռնատար ինքնաթափ՝ 1 հատ, բուլդոզեր՝ 1 հատ, էքսկավատոր՝ 1 հատ, ավտոամբարձիչ՝ 1 հատ:

#### 6.4. Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,

*Շինհրապարակի կազմակերպման ընդհանուր սխեմա.*

- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինհրապարակում կարևորվում են հետևյալ միջոցառումների կատարումը:

– Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

– Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը: Այսպիսով՝ կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը:

– Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ժամանակավոր կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

#### **6.5. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Նյութերից օգտագործվելու են մետաղական ամրաններ, բազալտե մաքրատաշ քարեր, քարե բլոկներ, մետաղական ցանցեր, շինարարական քար, բետոնային խառնուրդ, ցեմենտ, ավազ, պրոֆիլավոր թիթեղ, ապակի, փայտ, ամրաններ և այլն:

Նյութերի ցանկը և քանակները կներկայացվեն աշխատանքային նախագծում:

Բնառեսուրսներից շինարարության ընթացքում կօգտագործվի ջուր՝ աշխատանքային հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Ջրցանը իրականացվելու է տարվա տաք և չոր եղանակին: Նման օրերի հաշվարկային թիվը ընդունվում է տարեկան 180 օր, ընդամենը՝ 360 օր:

Ջրցանի օրական ջրապահանջը կկազմի՝

$W = S \times 2 \times 0.0015$ , որտեղ.

S – ջրցանվող տարածքը, 600 մ<sup>2</sup>

2 - օրական ջրցանի քանակը,

0.0015 – 1 մ<sup>2</sup> ջրցանի նորմը լիտրերով:

$W = 600 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ լ/մ}^2 = 1.8 \text{ մ}^3$ , տարեկան՝  $1.8 \text{ մ}^3 \times 360 = 648 \text{ մ}^3$ :

#### **Գրունտի խոնավացում**

Փորման աշխատանքների արդյունքում հանվում է ընդհանուր 2160մ<sup>3</sup> գրունտ: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվում է գրունտի խոնավացում:

Խոնավացման համար անհրաժեշտ ջրաքանակը կկազմի.

$$2160 \text{մ}^3 \times 8 \text{ ր/մ}^3 = 17280 \text{ ր կամ } 17.28 \text{մ}^3:$$

Հողային աշխատանքների տևողությունը՝ 50 օր, միջին օրական ջրաձախսը կկազմի՝

$$\text{Միջին օրական՝ } 17.28: 50 \text{ օր} = 0.346 \text{ մ}^3/\text{օր}:$$

Ջրցանի համար ջուրը շինհրապարակ կրերվի ջրցան լվացող մեքենայով:

### Խմելու-տնտեսական կարիքներ

Ջրապահանջը հաշվարկվում է համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրաձախսը կազմում է՝

$$W_{\text{խ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T, \text{ որտեղ}$$

$n_1$  – ԻՏԱ թվաքանակն է՝ 3 մարդ

$N_1$ – ԻՏԱ ջրաձախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_2$  – բանվորների թվաքանակն է՝ 17 մարդ

$N_2$ – ԻՏԱ ջրաձախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շինընթացքում 360 օր

$$W_{\text{խ.}} = (3 \times 0.016 + 17 \times 0.025) \times 360 = 170.28 \text{ մ}^3/\text{շինժամանակաշրջան}:$$

Խմելու-տնտեսական կարիքների համար քրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տարածքում առկա Վեոլիա ջուր ընկերության ջրատարից:

## 7. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ

Նախատեսվում են չորս հատ երկփողանի սեղմված բնական գազի լցայուններ մեկ ընդհանուր մետաղական ծածկով, ստորգետնյա գազի կուտակիչ հոր  $V=400$ լ: Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ չորս փողանի հեղուկ վառելիքի լցայունակ, (որից երեք հատը բենզին, իսկ մեկ հատը դիզ վառելիքի համար), ինչպես նաև 10խմ տարողությամբ հեղուկ վառելիքի տարաների համար հորեր: Ըստ նախագծային փաստաթղթերի գործունեության հզորությունները՝ վառելիքի վաճառքի առավելագույն տարեկան քանակների համար հետևյալն են.

- Բնական գազ՝ 438. 0 տ,
- Հեղուկ գազ՝ 48. 0 տ,
- Բենզին՝ 180 տ,
- Դիզ.վառելիք՝ 120 տ:

### **Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը**

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազալցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ /ներառյալ/ սեյսմակայունության, -600 C արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960 Պա ձյան բեռի և 441 Պա քամու դինամիկ ճնշման

հաշվարկով: Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍ 27577-87 պայմաններին:  
ԱԳՆԿՍ դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ.

Մեթան	-95,01
Էթան	-1,42
Պրոպան	-0,51
Իզոբուտան	-0,05
Իզոպենտան	-0,02
Թթվածին	-0,06
Ազոտ	-2,45
Հեքսան	-0,01

Ծծմբաջրածին-0,0015 գր/մ<sup>3</sup>

Թույլատրված պարունակությունը:

Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան– մինչև 2%, ազոտ– մինչև 10%, ածխաթթու գազ– մինչև 2%:

Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան– մինչև 2%, ազոտ– մինչև 10%, ածխաթթու գազ– մինչև 2%:

Գազի խտությունը, կգ/մ<sup>3</sup> – 0,65+0,85: Նվազագույն ջերմատվությունը – 7920 կկալ/մ<sup>3</sup> Խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին – ըստ OCT 51.40-83:

ԱԳԿԿ մուտքին գազի ջերմաստիճանը. +30°-ից -5° ԱԳԿԿ մուտքին գազի ճնշումը.0,4+0,6 ՄՊա /բացարձակ/

Մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը – 19,6 ՄՊա:

Ելքի 0,8 ՄՊա ճնշման դեպքում ԱԳԿԿ-ի անվանական լիցքավորման հնարավորությունը օրական 250 մեքենա է:

Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ 60 նմ<sup>3</sup> - ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 80 նմ<sup>3</sup> - ՁԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար:

Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը - 70 նմ<sup>3</sup>

Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները, 10-12 րոպե է:

ԱԳԿ աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ ԱԳԿԿ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է:

Աշխատող կոմպրեսորի ԱԳԿԿ առավելագույն պահանջվող հզորությունը 225 կվտ է:

Նախագծի տեխնիկական որոշումները համապատասխանում են 1986թ. հրատարակված “ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման

կանոններին”:

Համաձայն 1986թ. հրատարակված « ԱԳԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոնների» խողովակների վթարային քանակ չի պահանջվում:

Սարքավորումների և խողովակաշարերի վիբրացիայի (տատանումների) մակարդակը համապատասխանում է ՌՏՄ 26-12-11-75 «Գլանային օպոզիտային կոմպրեսորներ: Գազի ճնշման տատանման և հաղորդակցման տատանման հաշվարկի մեթոդակարգին» և ԳՈՍՏ 12.2.016-76 «Կոմպրեսորային սարքավորումներ: Անվտանգության ընդհանուր պահանջներին»:

Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԿ տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

### **Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը**

Բնական գազը հիմնական գազատարից անցնելով ճնշման կարգավորիչով մտնում է կոմպրեսորային բաժին:

Կոմպրեսորային բաժնում գազը մաքրվում է մեխանիկական խառնուրդներից և խոնավությունից և մտնում կոմպրեսորներ: Կայանում տեղադրվելու է ԴՄ-10/250ՄՅ2 տիպի 1 հատ ճնշակային տեղակայանք: Կոմպրեսորների սառեցումը կատարվում է ջրային եղանակով:

Կոմպրեսորներից հետո գազը մաքրվում է յուղից և խոնավությունից: Անջատված յուղը և ջրի կաթիլները հավաքվում են հատուկ տարողության մեջ:

Կոմպրեսորային բաժնից գազը տրվում է կուտակիչներ ( $V=400l$ ) որտեղից և լցասյունակներ: Կայանում օգտագործվում են հերմետիկ սարքավորումներ, հսկիչ չափիչ սարքեր, ավտոմատ կարգավորիչներ, որոնց շնորհիվ գազի սեղման, չորացման և մաքրման ընթացքում բացառվում են արտանետումները:

Ավտոմեքենաների գազալիցքավորումը կատարվում է ճկափողի օգնությամբ: Ճկափողերը միացված են կոմպրեսորների մուտքին և մնացորդային գազը ներքաշվում է կոմպրեսորների մուտքի գծի մեջ:

## **8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՄ**

### **8.1 Ռիսկերի գնահատում**

Խնձորեսկ գյուղի վարչական տարածքում նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ

- հիմքերի փորման ընթացքում,



- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ,
- հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Սակայն այս բոլոր գործոնները չեն կարող զգալի ազդեցություն ունենալ Խնձորեսկ բնակավայրի վրա, քանի որ.

- տարածքն ուղիղ գծով գտնվում է Խնձորեսկի մոտակա բնակելի տներից 2.5 կմ հեռավորության վրա,
- տարածքի և բնակավայրի միջև գտնվում է բլուր, որը հանդիսանում է բնական պատնեշ:

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Բազմավառելիքային լցակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները գնահատվել են երկու փուլերի համար.

- շինարարական աշխատանքներ,
- լցակայանի շահագործում:

## 8.2 Մթնոլորտային օդի վրա ազդեցություններ

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով՝ պայմանավորված նախատեսվող շինությունների կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզելավառելիքի աշխատանքի դեպքում: Շինարարության

ընթացքում վերը նշված արտանետումները տեղայնացված են, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Քանի որ շին հրապարակը բաց տարածք է, ապա նույնիսկ քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոններ և շինանյութեր տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս օդի աղտոտվածության ավելացում չի լինի: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում արտանետումների քանակները լրացուցիչ կնվազեցվեն հայտում նախատեսված միջոցառումների իրականացմամբ /ջրցան կամ տեխնիկական միջոցների կարգաբերում և այլն/:

Շահագործման փուլում կառաջանան ածխաջրածնային արտանետումներ, որոնց քանակը և հաշվարկը ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվության համապատասխան բաժնում:

Օդային ավզանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարության ընթացքում իրականացվող հողային աշխատանքների ժամանակ իրականացնել ջրցան,
- շինանյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

### 8.3 Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված բանաձևով:

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times B \times G \times 106 / 3600 \text{ (գ/վ)},$$

որտեղ՝

$K_1$  -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

$K_2$  -ը փոշու մասնաբաժինն է, որը կարող է վերաժվել աերոզոլային մասնիկների, 0.02

$K_3$  -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

$K_4$  -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

$K_5$  -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի խոնավությունը, 0.6 /հաշվի առնելով ջրցանը/

$K_6$  -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 18 ամիս, հողային աշխատանքների տևողությունը նախատեսված է 50 աշխատանքային օր:

Փորվող, հանվող հողի/գրունտի ընդհանուր զանգվածը կազմում է  $G = 2160 \text{ մ}^3$  ամբողջ ընթացքում, մեկ ժամում՝

$2160 \text{ մ}^3 : 50 \text{ օր/շին.} : 8 \text{ ժամ/օր} = 10.8 \text{ մ}^3/\text{ժամ}$  կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝

$10.8 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.6 \text{ տ/մ}^3 = 8.65 \text{ տ/ժամ}$ :

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 1.0 \times 0.6 \times 0.4 \times 0.6 \times 8.65 \times 10^6 / 3600 = 0.345 \text{ գ/վրկ}$$

Փոշու գումարային արտանետումները հողային աշխատանքների արդյունքում կկազմեն՝

$0.345 \text{ գ/վ} \times 50 \text{ օր/շին} \times 8 \text{ ժամ/օր} \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.495 \text{ տ/շին}$ . ժամանակահատված:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում:

#### 8.4 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շին. տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի

գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն ըստ արտադրող ընկերությունների հրահանգների: Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չգերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի: Բացի այդ, հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում իրականացվել է աղմուկի գործիքային չափումներ և կապված մեքենաների երթևեկության ինտենսիվությունից աղմուկի մակարդակը տատանվել է 41-61 դԲա սահմաններում:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների դեպքում ազդեցություններ չեն սպասվում:

*Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝*

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի տներ) հեռավորությունը շինտարածքից:

### **8.5 Ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, հանված հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը հիմնականում ներառվելու են Խնձորեսկ գյուղի բնակիչները: Տարածքում է Վեռլիա ջրին պատկանող կոյուղու համակարգ:

Հիմնական ջրապահպան միջոցառումներն են.

- Զրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չլինի արտահոսք,
- Ավտոճանապարհի և շինարարական հրապարակի միջև կառուցել առանձնացնող հողաշերտ՝ կանխելու համար մակերևութային ջրերի ներթափանցումը և տարածքի ջրերի արտահոսքը:

### 8.6 Ազդեցությունը հողածածկի վրա

Շինարարական աշխատանքների ժամանակ հողածածկի աղտոտում չի սպասվում: Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ բերրի հողաշերտի պահպանումն է: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումն պետք է իրականացնել, առաջնորդվելով - ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 82 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ հաստատված կարգով: Հողային աշխատանքների ժամանակ կհանվի 240 մ<sup>3</sup> բուսահող, որը կառանձնացվի գրունտից, կպահեստավորվի և կտնօրինվի ՀՀ կառավարության 02.10. 2017 թ N 1404-Ն պահանջներին համապատասխան: Այս միջոցառման շրջանակներում բերրի հողը կհանվի, կտեղափոխվի տարածքի հարավային մաս՝ որտեղ հատուկ միջոցառումներով կպահպանվի: Նախատեսվում է հողամասի հարավային մասի երկարությամբ կազմակերպել բերրի հողի պահեստ՝ ծածկի տակ և շրջանցող առուներով: Բերրի հողը ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով: Որպեսզի նվազագույնի հասցվի բերրի հողի հատկությունների կորուստը՝ պահպանման ընթացքում, յուրաքանչյուր տեղամասի աշխատանքների ավարտից այդ մասի բերրի հողը, առանց սպասելու ընդհանուր աշխատանքների ավարտին, անմիջապես կփռվի և կխնամվի:

### ***Թափոնների կառավարման և հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝***

- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում հետագայում որպես երկրորդային հումք վաճառել կամ հանձնել լիցենզավորված կազմակերպություններին,

- մեքենա-սարքավորումների լիցքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

- շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,

- շինարարական աղբը ժամանակին տեղափոխել համայնքի ղեկավարի կողմից հատկացված աղբավայր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն: Ըստ նախնական գնահատման շինարարական աղբի ծավալը սպասվում է 50 մ<sup>3</sup> սահմաններում:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. №430-Ն հրամանով հաստատված «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ում և ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. N342-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկ»-ում ուղղակի շինարարական աղբ դասակարգում չկա, առավել մոտ է՝ 9120060101004 ծածկագիրը, վտանգավորության դասը՝ IV:

- Կենցաղային աղբ, ծածկագիրը՝ 9120040001004 «Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)» վտանգավորության 4-րդ դաս), որը կուտակվելու է աղբահավաք տարողության մեջ, պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Ըստ նախնական գնահատման կենցաղային աղբի ծավալը կկազմի 25 - 30 մ<sup>3</sup>:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները /ընդհանուր 150խ/մ ծավալով/ տեղափոխվելու է Գորիսի համայնքապետարանի կողմից թույլատրված, տարածքում թափոնների գործող աղբավայր:

### **8.7. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա**

Անմիջապես նախատեսված տարածքում բնական բուսածածկ և վայրի կենդանիների ապրելավայրեր չկան:

Նախատեսված են կենսաբազմազանության պահպանության հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար օգտագործել անտառային հողերից հնարավոր հեռու տեղամաս,

- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում ահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում առնվազն 30 րոպե պարբերականությամբ,

- տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս արգելել,

- շինհրապարակում խուսափել շինարարական աղբի այրումից և կուտակումից,

- բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին:

Հիմնական միջոցառումը տարածքի կանաչապատումն է: Հողամասի 6730 քմ մակերեսով տարածքը կկանաչապատվի: Նախատեսվում է տարածքի եզրային մասերում և ճանապարհամերձ հատվածներում տնկել տարածքի բնակլիմայական պայմանների բնորոշ ծառատեսակներ: Եզրային մասերում նախատեսված են բարդիներ, կենտրոնական մասերում՝ վարդի թփեր: Իսկ միջնամասի առանձին հատվածներում՝ սիճամարգ և ծաղկանոցներ: Կանաչ տարածքների ոռոգումը նախատեսված է բերովի ջրով՝ ջրցան մեքենաներով:

### 8.8. Սոցիալական ազդեցությունը

Սոցիալական ազդեցության գործոններն են՝ շինարարական աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծումը, հողօգտագործումը ենթակառուցվածքների վրա հավելյալ ծանրաբեռնվածությունը, տեղական աշխատուժը, ժողովրդագրական խնդիրները: Շինարարական աշխատանքների ընթացքում այս բոլոր գործոնները չեն ունենա էական ազդեցություն, քանի որ շինարարական հրապարակը գտնվում է զգալի հեռավորության վրա բոլոր ընկալիչներից, առաջին հերթին բնակելի թաղամասերից: Միևնույն ժամանակ ախատեսվող գործունեության համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Ընդհանուր առմամբ շինարարության և լցակայանի շահագործման սպասարկող անձնակազմի թվաքանակը կկազմի երկու տասնյակից ավել մարդ: Անձնակազմի հավաքագրման ընթացքում առաջնապատվություն կտրվի տեղի բնակչությանը:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,

- շինհրապարակը ցանկապատել և վերահսկել կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,

- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,

- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ

- շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում,

- հնարավորության սահմաններում աշխատանքների համար ներգրավել տեղի բնակչությանը,
- ապահովել արժանավայել վարձատրություն, արձակուրդ և սոցիալական պաշտպանություն:

### 8.9. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
  - Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
  - Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
  - Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
  - Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
  - Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
  - Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
  - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
  - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:
  - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
- Հրդեհաանվտանգության միջոցառումներով նախատեսվում է.
- հակահրդեհային հիդրանտ՝ 2 հատ
  - 1 հատ օդափրփրիչային կրակմարիչ



- ավազով լցված արկղ՝ 0,5 մ<sup>3</sup> ծավալով, թաղիք կամ ազբեստագործվածք /2 X 3/ չափով:

Կայանում հնարավոր առաջացած հրդեհը մարելու համար պետք է օգտագործվի առատ փրփուր մղող հատուկ տեխնիկա, ջուրը օգտագործվելու է տարողությունները հովացնելու համար:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

## 8.10. Շահագործման փուլի ազդեցություններ

### 8.10.1 Օդի աղտոտում

Հեղուկ օրգանական վառելիքի ածխաջրածինների արտանետման աղբյուրներ են հանդիսանում նավթամթերքի ռեզերվուարները և վառելիքի լցման հանգույցները:

Լցակայանում կատարվելու է հեղուկ գազի, բենզինի և դիզելային վառելիքի լիցքավորում:

Բնական գազի լիցքավորման ընթացքում արտանետումներ չեն նախատեսվում, քանի որ բոլոր խողովակները միացած են ճնշակների ներքաշման գծին և գազի բոլոր մնացորդային քանակները անմիջապես ներքաշվում են ճնշակի մուտք:

Հեղուկ գազի, բենզինի և դիզելային վառելիքի լիցքավորում ընթացքում կառաջանան ածխաջրածինների արտանետումներ:

Արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ ռուսական «РОСНЕТ» ՓԲԸ մեթոդակարգի:

Հաշվարկների մեթոդակարգը ընտրելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ավտոմեքենաների առավելագույն քանակը, որոնց վառելիքը կարող է միաժամանակ լիցքավորվել:

Օրգանական վառելիքի լցակայաններից ածխաջրածինների տարեկան արտանետումը որոշվում է համապատասխան նորմատիվների հիման վրա, որոնք հաշվի են առնում նավթամթերքների կորուստը պահեստավորման և լիցքավորման ժամանակ՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$G = (n8G_{\text{вл}} + n9G_{\text{оз}}) \times 10^{-3}$$

որտեղ. n8 և n9 գործակիցները օրգանական վառելիքի լցակայաններում, նավթամթերքների բնական կորուստների նորմերն են ընդունման, պահեստավորման և լիցքավորման ժամանակ, համապատասխանաբար գարուն-ամառ և աշուն-ձմեռ ժամանակահատվածներում՝ կլիմայական գոտուն և ռեզերվուարի տեսակին համապատասխան՝ կգ /տ, (մեթոդակարգի աղյուսակ 6):

G<sub>оз</sub>, D<sub>вл</sub> – մեկ տարվան համապատասխան ժամանակահատվածում օրգանական վառելիքի լցակայաններում վաճառված նավթամթերքի քանակը, տ.

Այս բանաձևը կիրառվում է ոչ շատ մեծ լցակայանների համար, որոնց շարքին են

դասվում օրական մինչև 500 լիցքավորում կատարող լցակայանները: Ներկայացվող լցակայանում նախատեսվում է սպառել օրական.

հեղուկ գազ՝ 130 - 140 կգ,

բենզին՝ 400 – 500 կգ,

դիզվառելիք՝ 330 - 350 կգ:

Այս քանակների սպառման համար կպահանջվի 250 – 300 լիցքավորում (300 < 500)

Վերը բերված ծավալները գարուն-ամառ և աշուն-ձմեռ շրջաններում վաճառվում են հավասարաչափ:

Կորուստների գործակիցները ընդունվում են ըստ մեթոդակարգի 6 աղյուսակի, ելնելով կլիմայական գոտուց: Ներկայացվող հաշվարկների համար ընտրվել են գործակիցներ, որոնք համապատասխանում են ՌԴ տաք կլիմայական գոտուն.

$n_8 = 0.97$  կգ /տ

$n_9 = 0.54$  կգ /տ:

Տարեկան վաճառվող առավելագույն ծավալները. Հեղուկ գազ՝ 48 տ,

Բենզին՝ 180 տ,

Դիզվառելիք՝ 120 տ:

Ածխաջրածինների տարեկան արտանետումները կկազմեն.

$G = [0.97 \times (48 + 180 + 120) + 0.54 \times (48 + 180 + 120)] \times 10^{-3} = 0.53$  տ/տարի:

Ըստ նախնական գնահատման առավելագույն արտադրողականության պայմաններում լցասյունակների լիցքավորման գործընթացը կտևի օրական մետավորապես 12 ժամ, կամ տարեկան՝ 4360 ժամ: Այստեղից վարկյանում արտանետումը կկազմի՝

$0.53$  տ/տարի  $\times 10^6$ գ/տ:  $4360$  ժամ/տարի :  $3600$  վրկ/ժամ =  $0.034$  գ/վրկ:  
Տարեկան՝

### **8.10.2 Գեղնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները**

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» ծրագրով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է հարթավայրում և 1 կմ շառավղով բարձրությունների տարբերությունը չի գերազանցում 50 մ, ռելիեֆի գործակիցը ընդունվել է 1:

Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները բերված են

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ պաշտոնական կայքից, ստրատիֆիկացիայի գործակիցը՝ ՕՄՃ86 մեթոդակարգից:

Քանի որ արտանետումները կատարվում են մի քանի կետերից, ըստ ՕՒԴ-86 մեթոդակարգի հաշվարկվել է տեղադրվել է էֆեկտիվ տրամագիծ:

Հաշվարկներով որոշվել են.

- հաշվարկային կետի կոորդինատները, մ;
- վնասակար արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹԿ մասով;
- ջահի առանցքի ուղղությունը;
- քամու արագությունը մ/վրկ-ով, որի դեպքում հաշվարկային կետում

գետնամերձ կոնցենտրացիան հասնում է առավելագույն արժեքին:

Հաշվարկների արդյունքները բերված են Հավելված 1-ում:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում /տես աղյուսակ 6.1./:

Աղյուսակ 6.1. Ցրման հաշվարկի արդյունքները

Արտանետվող նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>		Հաշվարկված գետնամերձ կոնցենտրացիա	
		Առավելագույն միանվագ	Միջին օրական	մգ/մ <sup>3</sup>	ՍԹԿ մասով
Սահմանային ածխաջրածիններ	4	1.0	-	0.396	0.396

### 8.10.3. Ջրային ռեսուրսներ

Լցակայանի շահագործման ժամանակ ջուրը օգտագործվելու է կոմպրեսորի /ճնշակի/ հովացման համակարգի լրացման, ոռոգման և անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Կոմպրեսորների հովացում

Կոմպրեսորների հովացման համար օգտագործվում է ջրային հովացման համակարգ: Ջուրը բաքից պոմպի միջոցով տրվում է կոմպրեսորների սեղման յուրաքանչյուր աստիճանի շապիկ, որտեղից հոսում է ջերմափոխանակիչի միջխողովակային հատված, որից հետո տրվում է ջրի օդային հովացման համակարգ, վերադառնում բաքի մեջ և նորից տրվում համակարգ:

Շրջանառու ջրի համակարգը փակ կոնտուր է և չունի արտահոսք: Համակարգում հովացման ջրի ընդհանուր ծավալը որոշվում է  $V_{հոս} = d \times n \times t \times k$  բանաձևով, որտեղ.

d – կոմպրեսորի հովացման համակարգի ջրի ժամային ծախսը, 1,2 մ<sup>3</sup>,

n – աշխատող կոմպրեսորների քանակը, 1 հատ,

t – աշխատաժամերի թիվը տարվա ընթացքում, 8640

k – կոմպրեսորների շահագործման գործակիցը, 0,875:

$$V_{հոս} = 1,2 \times 1 \times 8640 \times 0,875 = 9072 \text{ մ}^3/\text{տարի}:$$

Հովացման փակ համակարգում կորուստների և համապատասխանաբար համալրման ծախսը կազմում է 1,5 %, որը կկազմի  $9072 \times 0.015 = 136 \text{ մ}^3/\text{տարի}:$

Ընդամենը համալրման օրական միջին ծախսը կկազմի՝ 0.38 մ<sup>3</sup>:

